



Funded by the
European Union

EU4Climate

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine



Consulting



Ազգային մակարդակով սահմանված գործողությունների ֆինանսավորման ռազմավարություն և ներդրումների ծրագիր



ՆԱԽԱԳԻԾ

*Պատրաստվել է «Ի-վի Քոնսալթինգ»
ՓԲԸ և Ադելֆին ՄԱԿ ՋԾ համար*

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Հայաստանի ՋԳ արտանետումները կազմում են համաշխարհային արտանետումների ավելի քիչ քան 0.02%-ը: Այնուամենայնիվ, Հայաստանը մինչև 2030թ.-ը հանձն է առել կրճատել իր ՋԳ արտանետումները գլոբալ նպատակների համատեքստում 40%-ով՝ 1990թ.-ի ելակետային տարվա համեմատ, որը կազմել է 25,855 Գգ CO₂ համ.: 2017թ. դրությամբ Հայաստանը հասել է ՋԳ արտանետումների 10,624 Գգ CO₂ համ.¹ մակարդակին (ելակետային տարվա համեմատ ապահովելով 41% կրճատում (առանց Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում սեկտորի): Այնուամենայնիվ, գրեթե բոլոր սեկտորներում արձանագրվում է աճի միտում, ուստի որպեսզի 2030թ.-ի թիրախը լինի հասանելի, հարկավոր է իրականացնել լրացուցիչ միջոցառումներ:

Սեկտորներ	1990	2000	2017
Էներգետիկա	22,719.4	4,255.1	7,087.4
ԳԱՏԱՀ (առանց Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում սեկտորի)	2,085.7	1,374	1,965.4
Արդյունաբերական պրոցեսներ	631.2	152.9	950.5
Թափոններ	418.8	513.8	620.7
Ընդամենը ՋԳ արտանետումներ (առանց Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում սեկտորի)	25,855	6295.8	10,624
Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում	-736.9	-467.8	-470.6
Զուտ ՋԳ արտանետումներ	25,118.1	5,828.0	10,153.5

Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (ԱՍԳ) ֆինանսավորման ռազմավարության և ներդրումների ծրագիրը (ՖՌՆԾ) ներառում է հինգ բաժին: Առաջին բաժինն անդրադառնում է Հայաստանի ստանձնած ԱՍԳ հանձնառություններին, ՋԳ արտանետումների ամենամեծ ծավալը ապահովող ոլորտներին և մինչ օրս դրանց հատկացված կլիմայական ֆինանսավորմանը, ինչպես նաև այն հիմնական սահմանափակումների ու բացերի շրջանակին, որն անհրաժեշտ է հասցեագրել: Երկրորդ բաժինը ներկայացնում է ֆինանսական ռեսուրսների կարիքների կանխատեսումը, որն անհրաժեշտ է մինչև 2030 թվականը սահմանված ԱՍԳ թիրախին հասնելու համար: Երրորդ՝ այս փաստաթղթի գլխավոր բաժինը, նվիրված է միջազգային և ազգային մակարդակներում պետական, մասնավոր ռեսուրսները մոբիլիզացնելու ուղիներին: Մյուս երկու բաժիններում քննարկվում են կլիմայական ֆինանսավորման ոլորտում չափումների, հաշվետվողականության և ստուգման մեխանիզմները, ֆինանսավորման կառուցվածքի բարելավմանն ուղղված միջոցառումների ցանկը և ներդրումների ծրագիրը՝ անհրաժեշտ գործողությունների սահմանմամբ:

ՖՌՆԾ-ի նպատակն է օգնել կառավարությանը՝ կյանքի կոչելու ԱՍԳ-ում և ԱՍԳ իրականացման ծրագրում առանձնացված առաջնահերթ գործողությունները, և ուղղորդել ֆինանսավորման արդյունավետ գնահատման, մոբիլիզացիայի, չափման և կիրառման գործընթացները:

¹ UNDP, Third Biennial Update Report, 2021, [link: <https://unfccc.int/documents/274257>]

Ռեսուրսների մոբիլիզացիա

Ներքին պետական ֆինանսավորում: Ներկայումս բյուջետավորման գործընթացում չի կիրառվում կլիմային առնչվող ծախսերի հաշվարկի հստակ մեխանիզմ, ուստի պետական բյուջեում կլիմայական ծրագրերը նույնականացվել են՝ հիմք ընդունելով իրականացված ծախսի նպատակը և կլիմայի վրա հնարավոր ազդեցությունը՝ դրանց համապատասխանության աստիճանի ու ազդեցության ինտենսիվության կշռված գնահատմամբ: Ըստ այդմ, 2021թ. Պետական բյուջեում նույնականացվել է կլիմային առնչվող 185 միջոցառում, որոնք կազմել են բյուջեով նախատեսված բոլոր միջոցառումների շուրջ 12.5%-ը: Բացի պետական բյուջեում կլիմայական հատկորոշման (tagging) բացակայությունից, կլիմայական առավել թիրախային և արդյունավետ գործողությունների իրականացմանը խոչընդոտում է նաև բյուջետային հատկացումների արդյունավետ կատարումը: 2021թ. դրությամբ բյուջեի կատարումը կազմել է շուրջ 73%: Ներկայիս ծրագիրը հանդես է գալիս պետական բյուջեի կատարման արդյունավետության բարձրացմանն ուղղված հնարավոր ուղիների առաջարկներով, ներառյալ՝ (i) կանխատեսումների ընթացքում կլիմայի փոփոխության (բնապահպանական և ֆինանսական) ազդեցության գնահատումը, (ii) ոլորտային նախարարությունների կողմից բյուջեների մշակման ընթացքում կլիմային առնչվող կարիքների գնահատումների իրականացումը, (iii) Չափողականություն, հաշվետվայնություն և հավաստագրում (ՉՀՀ) բարելավված համակարգի միջոցով պատշաճ հատկորոշման կիրառում:

Պետություն-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ): ՊՄԳ-ների միջոցով մասնավոր հատվածի ներգրավումը կարող է բերել կլիմային առնչվող նախագծերի ավելի արդյունավետ իրականացման և ծառայել որպես ֆինանսավորման լրացուցիչ աղբյուր: Թիրախավորված ոլորտներում Հայաստանն ունի ՊՄԳ նախագծերի իրականացման հաջող պատմություն, և այս հաջողությունն ինստիտուցիոնալ հիմքերն ամրապնդելու նպատակով 2017թ. կառավարությունն ընդունեց Պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականությունը Հայաստանում, իսկ 2019թ.՝ ՀՀ օրենքը պետություն-մասնավոր գործընկերության մասին: Այս հաջողության շարունակականությունը հետագայում ևս ապահովելու և կանաչ ենթակառուցվածքների, բնական ռեսուրսների կառավարման ու նորարարական նախագծերի համար ՊՄԳ շրջանակի գրավչությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է, ի թիվս այլոց, որդեգրել ոչ պաշտոնական ուղեցույցներ կանաչ նախագծերի համար՝ հիմնված ՊՄԳ-ների լավագույն պրակտիկայի և ուղեցույցների վրա, ավելի գործուն կերպով ստեղծել ՊՄԳ օրենքով նախատեսված խթաններ այն կողմերի համար, որոնք կհամապատասխանեն շրջակա միջավայրի արդյունավետության (կատարողականի) հիմնական ցուցանիշներին, և, ի վերջո, հոգ տանել, որ փոխատուների և ներդրողների ռիսկերը, որոնք մեծապես կախված են օժանդակ ենթակառուցվածքների կատարողականից, կողմերի միջև բաշխվեն իրավացիորեն: Այս ռազմավարությունը նախատեսում է մշակել ՊՄԳ հաղորդակցության, համակարգման և գիտելիքի փոխանակման հարթակներ, որոնք կօգնեն ոլորտին և համայնքին՝ ձևակերպելու կարիքները և նույնականացնելու ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հեռանկարները:

Միջազգային հանրային ֆինանսավորում: Հայաստանը հիմնականում օգտագործում է բազմակողմ ֆինանսավորման երկու աղբյուր՝ (i) ՄԱԿ ԿՓՇԿ-ի շրջանակում ամրագրված ռեսուրսներ և (ii) կլիմայական ֆոնդեր, մասնավորապես՝ Կլիմայական ներդրումների

հիմնադրամի (ԿՆՀ) կողմից հատկացվող ռեսուրսներ: Բազմակողմ և երկկողմ միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) ճնշող մեծամասնությունը գործում է Հայաստանում: Անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես կարելի է էլ ավելի զարգացնել նրանց հետ համագործակցությունը՝ հիմք ընդունելով նրանց կողմից հատկացվող ֆինանսավորման առանցքային ոլորտները, ինչպես նաև գտնել նրանց հետ համագործակցության նոր ուղղություններ: Նաև անհրաժեշտ է ամրապնդել կառավարության, առևտրային բանկերի և մասնավոր ներդրողների միջև հետագա համագործակցությունը, ի թիվս այլ միջոցների, ներգրավելու համակցված ֆինանսական միջոցներ՝ նվազեցնելու պարտքի բեռը և կրճատելու տոկոսավճարները:

Միջազգային կլիմայական ֆինանսավորում: Հայաստանը պետք է ներդնի ռեսուրսներ՝ ստեղծելու կարողություններ, որոնք անհրաժեշտ են կլիմայական նոր ֆոնդերին, ֆինանսավորման որակյալ հարթակներին հասանելիություն ապահովելու և այդ ֆոնդերի հատուկ պահանջներին համապատասխանելու ճիշտ ուղիները հասկանալու համար: Ապագա համագործակցությունը կարող է կառուցվել հետևյալ ոլորտներում՝ (i) **ՄԱԿ ԿՓՇԿ-ի հարմարվողականության հիմնադրամ**՝ հարմարվողականությանն առնչվող բոլոր ոլորտներ, (ii) **Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կլիմայի ֆինանսավորման հիմնադրամ**՝ դրամավարկային ռիսկերի կառավարման պրոդուկտներ՝ ընդլայնելու կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման և հարմարվողականության տեխնոլոգիաները, մոբիլիզացնելու կլիմայի մասնավոր ֆինանսավորման նոր աղբյուրներ և պահպանելու կլիմայի նկատմամբ զգայուն ոլորտներում ներդրումները, (iii) **Կլիմայի փոփոխության հիմնադրամ**՝ մաքուր էներգիա, ցածր ածխածնային քաղաքաշինության պլանավորում, անտառահատումների և հողերի դեգրադացիայի հետևանքով առաջացող արտանետումների կրճատում, հարմարվողականության նախագծեր և կլիմայի ֆինանսավորման պատրաստականություն, (iv) **Կանադայի կլիմայի փոփոխության ծրագիր**՝ վերականգնվող էներգիայի և հարմարվողականության նախագծեր:

Սույն ռազմավարությունը մանրամասնում է նախկինում չօգտագործված այս միջոցների արդյունավետ ֆինանսավորման մոբիլիզացիայի ներուժը առավելագույնին հասցնելու համար անհրաժեշտ գործողությունները:

Կանաչ պարտատոմսեր: Թեև Հայաստանում կանաչ պարտատոմսերի շուկայի զարգացման առաջին քայլերն արվել են Ամերիաբանկի կողմից երկու պարտատոմսերի թողարկմամբ, կան որոշակի ռիսկեր՝ կապված Հայաստանում կանաչ պարտատոմսերի շուկայի զարգացման և աճի հետ: Այդ ռիսկերը ներառում են հաշվետվողականության որակը կամ դրանց բացակայությունը, թափանցիկությանն առնչվող խնդիրներ և ընկերությունների նկատմամբ անվստահություն, «կանաչ քաղարկման (greenwashing)» ռիսկեր և համեմատական գնային քաղաքականություն: Պարտատոմսերի առումով Հայաստանի օրենսդրական դաշտը սահմանափակվում է պետական պարտատոմսերով, ապահովված հիփոթեքային պարտատոմսերով և եվրապարտատոմսերով: Ուստի, կորպորատիվ (կանաչ) պարտատոմսերի շուկայի համար կամավոր ուղեցույցների կազմումը և կանաչ պարտատոմսերի շրջանակային փաստաթղթի մշակումը կարող են ապագայում խթանել ընկերությունների կողմից պարտատոմսերի թողարկումը:

Ռազմավարությունը ներկայացնում է ռիսկերի մեղմման կամ վերացման կարգավորման մեղմ միջոցառումներ և գործողություններ:

Ածխածնի շուկա / արտանետումների առևտրի համակարգ: Ածխածնի արտանետումների համար գին սահմանելով՝ արտանետվող ածխաթթու գազի հետևանքով մթնոլորտի աղտոտման բնապահպանական և սոցիալական ծախսերի ինտերնալիզացիան (ընկալումը) կարող է նպաստել, որ ներդրողներն ու սպառողներն անցնեն ցածր ածխածնային լուծումների (պայմանավորված սահմանված գնով): Ածխածնի շուկայի ձևավորման պլանավորման փուլում կարևոր դեր է խաղում մի քանի առանցքային նախաձեռնություն, այդ թվում՝ ՉՀՀ համակարգի ստեղծումը, հաշվապահական հաշվառման ստանդարտների ներդրումը և ածխածնի միջազգային շուկայում սիներգիայի ապահովումը: 2021թ. նոյեմբերին ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության համաժողովին (COP-26) Հայաստանը միացավ մյուս երկրներին՝ հավանություն տալով Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածին: Երկրները ձեռք բերեցին նոր պայմանավորվածություններ շուկայական մեխանիզմների վերաբերյալ, որոնք զգալիորեն նպաստում են երկրների միջև արտանետումների կրճատման փոխանցմանը՝ միաժամանակ ստեղծելով խթաններ մասնավոր հատվածի համար: Պայմանավորվածություն է ձեռք բերվել երեք գործիքի կիրառման կարգի վերաբերյալ, որոնք օգնում են երկրներին կյանքի կոչելու իրենց ԱՍԳ-ն: Այս գործիքներից առաջին երկուսը ներառում են համագործակցություն, որը կբերի երկրների միջև արտանետումների կրճատման՝ այն երկրից, որը հասել է կրճատման, դեպի այն երկիր, որը պետք է հասնի այդ կրճատմանը:

Կանաչ վարկեր: Գրեթե բոլոր խոշոր ֆինանսական հաստատությունները (օրինակ՝ ՎՋԲԲ, ԵՆԲ, ՀԲ, Գերմանական զարգացման բանկը (KfW) և այլն) և կլիմայի համաշխարհային ֆոնդերը տրամադրում են վարկեր, որոնք նախատեսված են՝ խթանելու անցումը կանաչ տնտեսությանը: Այս վարկային հաստատությունների հետ արդյունավետ գործընկերության և համագործակցության հաստատումն ունի մեծ ներուժ՝ ընդլայնելու Հայաստանում կանաչ վարկերի ֆինանսավորման շուկան: Այս առումով անհրաժեշտ է բարելավել քաղաքականության շրջանակը, որը, ի թիվս այլոց, ընդունում է կանաչ վարկերի սկզբունքներ, կլիմայի փոփոխության առումով զգայուն միջոցառումներ՝ ուղղված նախագծերի ֆինանսավորման գնահատման իրականացմանը, և սահմանում է հաշվետվությունների ներկայացման պահանջներ, որոնք ներառում են կատարողականի որակական և քանակական ցուցանիշներ:

Կլիմայական ֆինանսավորումն ու մոբիլիզացիան համակարգող մարմին: Հաշվի առնելով այն փաստը, որ կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանն ուղղված գործողությունները, ներառյալ՝ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացիային ուղղված գործողությունները, գտնվում են մի շարք նախարարությունների և պետական մարմինների լիազորությունների շրջանակում՝ Հայաստանի կառավարության համապատասխան որոշումներով ստեղծվել է միջկառավարական մարմին, որն իրականացնում է համակարգման, ստանդարտների սահմանման, ռեսուրսների մոբիլիզացիայի, շահագրգիռ կողմերի ներգրավման և վերահսկողության գործառույթներ: Կլիմայի փոփոխության համակարգման միջկառավարական խորհուրդը և վերջինիս՝ կլիմայական ֆինանսավորման, մեղմման ու հարմարվողականության, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման երեք աշխատանքային խմբերը օժտված են անհրաժեշտ գործառույթներով, ի թիվս այլոց, մոբիլիզացնելու լրացուցիչ ֆինանսական միջոցներ Հայաստանի տարբեր ռազմավարություններում գնահատված ԱՍԳՆ թիրախներին հասնելու և բացերը լրացնելու համար: Դեռ վաղ է գնահատել՝ արդյոք այս ինստիտուցիոնալ մեխանիզմների մանդատը

բավարար է՝ իրականացնելու արդյունավետ համակարգում և մոբիլիզացիա, քանի որ խորհուրդը և իր աշխատանքային խմբերը դեռ պետք է սկսեն ավելի ակտիվ գործունեություն ծավալել: Առայժմ ակնհայտ է, որ անհրաժեշտ է ամրապնդել ազգային մակարդակով նշանակված կլիմայական ֆինանսավորման աշխատանքային խմբի անդամների՝ կլիմայական ֆոնդերից ռեսուրսներ մոբիլիզացնելու կարողությունները, քանի որ ոլորտն ունի իր առանձնահատկությունները է և պահանջում է լրացուցիչ գիտելիքներ և հմտություններ:

Չափողականություն, հաշվետվայնություն և հավաստագրում: Համաձայն Հայաստանում ԶԳ արտանետումների ազգային կադաստրի համակարգի մշակման ճանապարհային քարտեզի՝ Շրջակա միջավայրի նախարարությունը պատասխանատու է ԱԿՀ-ի, ԵԱԶ-ի և ԱՀ-ի մշակման գործընթացի ընդհանուր համակարգման համար, մինչդեռ դրանց հավաստագրումն ու հաստատումն իրականացվում է միջգերատեսչական համակարգման խորհրդի կողմից: Ներկայում չկա իրավական գործիք, որը սահմանում է կլիմային առնչվող տվյալների հաշվետվողականության, դրանց պահպանման և փոխանակման համար նշանակված ինստիտուտների պարտականությունները:

Առաջարկվում են շրջանակի հիմնական բաղադրիչները, ներառյալ՝ ազգային կադաստրի համակարգի մշակումը, չափումների ծրագրերն ու հաշվետվայնության հավաստագրման ռազմավարությունները (ՈԱ/ՈՎ):

ԱՂՅՈՒՄԱԿ 1 ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐՆ ԻՆՏԵԳՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՀՀ ԴԻԱՄ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ	ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	ԺԱՄԱՆԱ- ԿԱՑՈՒՅՑ
ԱՍԳՆ ֆինանսավորման համար կարգավորող իրավական շրջանակի բարելավում					
1.1	Մշակել կլիմայի փոփոխության մասին համապարփակ օրենք Մշակել կանաչ տաքսոնոմիայի իրավական շրջանակ Մշակել ինստիտուցիոնալ միջոցառումներ և ստեղծել կլիմայական ֆինանսավորման գրանցամատյան	6 միլիոն	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով (ԿՀՖ)	ՇՄՆ	2023-2024 թթ.
1.2	Մշակել և վերանայել ոլորտային ռազմավարությունները (հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն ու հարմարվողականության ընթացակարգերը)	12 միլիոն	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով (ԿՀՖ)	Ոլորտային նախարարություններ	2023-2025 թթ.
1.3	ԶՀՀ համակարգի (ներառյալ՝ կլիմային փոփոխությանն առնչվող գործողությունների հատկորոշման կիրառում) ներդրում և գործարկում	0	Պետական բյուջե, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով (ԿՀՖ)	ՀՀ կառավարություն	2023-2030 թթ.
1.4	Մշակել կլիմայի փոփոխության հետ կապված կապիտալ ծախսերի ուղեցույցներ և ձևանմուշներ	12 միլիոն	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՇՄՆ	2023-2024 թթ.
1.5	ՊՄԳ-ների համար խրախուսման կիրառելի համակարգի գնահատում, որը լիովին համապատասխանում է շրջակա միջավայրի համար սահմանված արդյունավետության (կատարողականի) հիմնական ցուցանիշներին (արտահայտված	4 միլիոն	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՇՄՆ, ՖՆ, ԷՆ	2023-2024 թթ.

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՀՀ ԴՐԱՄ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	ԺԱՄԱՆԱ- ԿԱՑՈՒՅՑ
	հարկային արտոնությունների, կառավարության կողմից տրամադրված երաշխիքների և այլ մեխանիզմների տեսքով)				
1.6	Մշակել կանաչ նախագծերի համար ՊՄԳ շրջանակ	1 միլիոն	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ԷՆ, ՖՆ, ՇՄՆ	2023 թ.
1.7	Նշանակել ազգային մակարդակով սահմանված մարմին, որը կհամակարգի կլիմայի փոփոխության բոլոր հիմնադրամների հետ աշխատանքը	0	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	Կառավարություն	2022 թ.
1.8	Մշակել կանաչ պարտատոմսերի շրջանակ	6 միլիոն	Պետական բյուջե, ԱԶԲ, KfW, ԿՀՖ, ԿՆՀ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՖՆ, ՇՄՆ, ՀՀ ԿԲ	2024 թ.
1.9	Ստեղծել կայուն հաշվետվայնության խթաններ և կարողություններ	Դեռ որոշված չէ	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՇՄՆ, ՀՀ ԿԲ	2024-2026 թթ.
1.10	Մշակել կանաչ վարկավորման սկզբունքներ (ապահովելու կանաչ վարկերի շուկայի ամբողջականությունը և սահմանելու համապատասխանելիության չափանիշները)	25-27 միլիոն	Պետական բյուջե, առևտրային բանկեր, ԱԶԲ, KfW, ԿՀՖ, ԿՆՀ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՖՆ, ՇՄՆ, ԷՆ, ՀՀ ԿԲ	2024 թ.

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՀՀ ԴՐԱՄ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	ԺԱՄԱՆԱ- ԿԱՑՈՒՅՑ
1.11	Ոլորտային նախարարությունների համար մշակել ուղեցույցներ, որոնք կօգնեն բյուջետավորման ժամանակ նրանց կողմից կլիմայի հարմարվողականության / մեղմման հեռանկարների հաշվառումը	1 միլիոն	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՇՄՆ	2023 թ.
1.12	Մշակել ածխածնի շուկայի զարգացման քաղաքականության հիմքը Մշակել ԱԱՀ-ի գործարկման համար անհրաժեշտ համակարգեր	6 միլիոն	Պետական բյուջե, ԱԶԲ, KfW, ԿՀՖ, ԿՆՀ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՖՆ, ՇՄՆ, ԷՆ, Միջգերատեսչական համակարգման խորհուրդ	2022-2033 թթ.
ԱՍԳՆ ֆինանսավորման կառավարման և վերահսկման բարելավմանն ուղղված ինստիտուցիոնալ մեխանիզմ					
2.1	Կլիմայի փոփոխության ներառում բյուջեի շրջանակում	Դեռ որոշված չէ	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	Ոլորտային նախարարություններ	2023 թ.
2.2	Կառուցել ռազմավարական հարաբերություններ բազմակողմ և երկկողմ ֆինանսական հաստատությունների հետ	Դեռ որոշված չէ	Պետական բյուջե	ՀՀ կառավարություն	2022-2030 թթ.
2.4	Ընդլայնել ՊՄԳ կանաչ նախագծերը	Դեռ որոշված չէ	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով (ԿՀՖ, ԿՆՀ)	ՏԿԵՆ, ԷՆ, ՇՄՆ	2023-2030 թթ.
2.5	Ստեղծել մոնիտորինգի, գնահատման և հաշվետվողականությանն ուղղված ազգային կադաստրի համակարգ	23 միլիոն	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ	ՇՄՆ, Կլիմայի փոփոխության միջգերատեսչական	2023-2024 թթ.

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՀՀ ԴՐԱՄ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	ԺԱՄԱՆԱ- ԿԱՑՈՒՅՑ
			աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	համակարգման խորհուրդ	
2.6	Մշակել ՈԱ / ՈՎ համակարգ	768 միլիոն	Պետական բյուջե, ԿՀՖ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՇՄՆ, Կլիմայի փոփոխության միջգերատեսչական համակարգման խորհուրդ	2023-2030 թթ.
Կարողությունների զարգացում					
3.1	Ինստիտուցիոնալ մակարդակում զարգացնել կարողություններ՝ համաձայն Ռազմավարության Հավելված 9-ի	9 միլիոն վերապատրաստման յուրաքանչյուր հանդիպման համար	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, ԿՀՖ	ՇՄՆ	2022-2024 թթ.
Գենդերային հավասարության հասնելու ռազմավարություն					
4.1	<p>Իրականացնել գենդերային ուղղորդում կլիմայի փոփոխության գործողությունների ծրագրում, ներառյալ.</p> <ul style="list-style-type: none"> • ԱՍԳՆ-ի իրականացման գործընթացում կյանքի կոչված յուրաքանչյուր միջոցառում պետք է նկարագրի գենդերային առանձնահատկությունները դիտարկող գործողությունները և համապատասխան բյուջեները • Կլիմայի փոփոխությանն առնչվող կարգավորումները պետք է հաշվի առնեն 	15 միլիոն	Պետական բյուջե, միջազգային դոնոր կազմակերպություններ, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով (ԿՀՖ, ԿՆՀ)	ՇՄՆ	2023 թ.

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՀՀ ԴՐԱՄ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
	<p>գենդերային առանձնահատկությունները (գենդերային իրավիճակը, վիճակագրությունը, մետրիկաները, թիրախները և այլն):</p> <ul style="list-style-type: none"> • ԱՍԳՆ ծրագիրը պետք է ներառի կանանց հզորացմանն ուղղված կլիմայական նախագծերի նպատակային ֆինանսավորում: 				
4.2	Մշակել գենդերային առանձնահատկությունները դիտարկող բյուջե՝ բարելավելով բյուջեի հատկորոշման գործընթացը և ներառելով գենդերին վերաբերող մետրիկաները բյուջեի տողերում:	0	Պետական բյուջե, այլ աղբյուրներ, որոնք արգելված չեն օրենքով	ՀՀ կառավարություն	2023-2030 թթ.
Լրացուցիչ միջոցառումներ (ներդրումային ծրագիր)					
5.1.1	122 փոքր ՀԷԿ-երի արդիականացում և ոռոգման համակարգի զարգացում	76 միլիարդ	Կլիմայի փոփոխության հարցերի շուրջ գործընկերության համաշխարհային հիմնադրամ, KfW, ՎՋԵԲ, կանաչ պարտատոմսեր, կանաչ վարկեր, սեփական կապիտալում ներդրումներ	Փոքր ՀԷԿ-երի սեփականատերեր, ԷՆ, ՏԿԵՆ, ՇՄՆ	2023-2026 թթ.
5.1.2	Խոշոր ԶԷԿ-երի կառուցում	60 միլիարդ	«Տաշիր գրուպ», «Էներգո ինվեստ հոլդինգ», «Ռենկո Արմենիա», Կլիմայի հիդրոէներգետիկայի հիմնադրամ, ՎՋԵԲ, ԵՆԲ, KfW, կանաչ պարտատոմսեր, կանաչ	ՀՀ կառավարություն, ՖՆ, ԷՆ, ՇՄՆ, ՏԿԵՆ, ՀԾԿՀ, Զրային կոմիտե, հիդրոլոգիական ծառայություններ	2023-2027 թթ.

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՀՀ ԴՐԱՄ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	ԺԱՄԱՆԱ- ԿԱՑՈՒՅՑ
			վարկեր, սեփական կապիտալում ներդրումներ		
5.1.3	300 ՄՎտ հզորությամբ հողմակայանի կառուցում	121 միլիարդ	ԱԶԲ, ՎՋԵԲ, KfW, «Ակիլա կապիտալ», «Ռամբոր Էներջի», «Գոլդ ուինդ» ընկերություն, Հայաստանի էներգետիկայի ոլորտի ներկայացուցիչներ, կանաչ պարտատոմսեր, կանաչ վարկեր, սեփական կապիտալում ներդրումներ	ՀՀ կառավարություն, ՇՄՆ, հիդրոլոգիական ծառայություններ	2022-2030 թթ.
5.1.4	Արդյունաբերական շենքերի գործառնական էներգաարդյունավետություն	71 միլիարդ	ՀՀ բյուջե, ՎՋԵԲ, KfW, ԶՖԳ, Կլիմայի փոփոխության հարցերի շուրջ գործընկերության համաշխարհային հիմնադրամ, ԱԶԲ կլիմայի փոփոխության հիմնադրամ, ԿՆՀ, կանաչ վարկեր, կանաչ պարտատոմսեր	ՀՀ կառավարություն, ՏԿԵՆ, ԷՆ, ՇՄՆ	2024-2031 թթ.
5.1.5	Էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների լիցքավորման կայանների ցանցի Էլեկտրական շարժունակության համար նպաստավոր միջավայր	9.8 միլիարդ	Պետական բյուջե, ԵՆԲ, KfW, Կանադայի կլիմայի փոփոխության ծրագիր, ԿՆՀ, Էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներկրողներ Հայաստանում,	ՀՀ կառավարություն, ՏԿԵՆ, ԷՆ, ՇՄՆ	2023-2026 թթ.

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ՀՀ ԴՐԱՄ	ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ	ԺԱՄԱՆԱ- ԿԱՑՈՒՅՑ
			Plug.am, կանաչ վարկեր, կանաչ պարտատոմսեր		
5.1.6	100 ՄՎտ էներգիայի կուտակման ենթակառուցվածք	56 միլիարդ	Պետական բյուջե, KfW, ԵՆԲ, ՎՋԵԲ և ԱՋԲ, Կլիմայական ներդրումների հիմնադրամ (էներգիայի պահեստավորման համաշխարհային ծրագիր), «Նեքսթերա էներջի» (ԱՄՆ), «ՌԵՍ» ընկերություն, «Ռեներա» (Ռուսաստան) և CATL (Չինաստան), կանաչ վարկեր, կանաչ պարտատոմսեր	ՏԿԵՆ, ԷՆ, ՇՄՆ	2024-2027 թթ.
5.1.7	Հակակարկտային ցանցերի 40% սուբսիդավորման ծրագիր Տավուշի մարզում	2.5 միլիարդ	Պետական բյուջե, մասնավոր ներդրումներ, կլիմայի հիմնադրամներ, կանաչ վարկեր, կանաչ պարտատոմսեր	ՏԿԵՆ, ԷՆ, ՇՄՆ	2023-2030 թթ.
5.1.8	Անտառաշերտերը՝ որպես կլիմայի փոփոխության հարմարվողականության գործիք Տավուշի և Արարատի մարզերի պտղատու այգիների համար	2.7 միլիարդ	Պետական բյուջե, կլիմայի հիմնադրամներ, կանաչ պարտատոմսեր	ՇՄՆ, ԷՆ	2023-2030 թթ.
5.1.9	Ջրամբարների կառուցում և վերանորոգում	140 միլիարդ	Պետական բյուջե, ԱՋԲ, ՋՖԳ, KfW, կանաչ վարկեր, կանաչ պարտատոմսեր, մասնավոր ներդրումներ	ՏԿԵՆ, ԷՆ, ՇՄՆ	2023-2032 թթ.